Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. IV, Ե., «Ասողիկ» հրատ., 2006, 292 էջ:

Պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ռ. Սաֆրաստյանի խմբագրությամբ լույս է տեսել «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» մատենաշարի 4-րդ հատորը, ուր ընդգրկված են հայերեն, ռուսերեն և անգլերեն ավելի քան երկու տասնյակ հոդված, ինչպես նաև երեք գրախոսություն: Գիտական բազմակարծությունը ապահովելու նպատակով ժողովածուում տեղ է տրվել նաև օտար (ռուս, թուրք) հեղինակների աշխատանքներին, դրանով էլ մատենաշարը լայնացրել է նաև իր ընդգրկման շրջանակը: Հատորը լույս է ընծայվել «Նար-առ» ընկերության տնօրեն Ա. Շահինյանի մեկենասությամբ, և սա հայաստանյան գիտության զարգացմանն ուղղված գիտական ու գործարար շրջանակների հաջող համագործակցության օրինակ է: Ժողովածուն ընդգրկում է ինչպես բազմավաստակ գիտնականների (Ռ. Սաֆրաստյան, Ա. Կիրակոսյան, Ալ. Սաֆարյան), այնպես էլ երիտասարդ հեղինակների (Ա. Սողոմոնյան, Ա. Դումանյան, Վ. Տեր-Մաթևոսյան) աշխատանքներ: Նշենք, որ մատենաշարի 4-րդ հատորի պատասխանատու քարտուղարն է երիտասարդ, շնորհաշատ թուրքագետ Ա. Շաքարյանը:

Ռ. Սաֆրաստյանը ժողովածուում հանդես է եկել երկու հոդվածով, որոնցից առաջինը՝ անգլերենը, նվիրված է հայ-թուրքական պատմական առընչություններին՝ սկսած սելջուկյանների շրջանից մինչև XIX դ. վերջերը: Իսկ երկրորդ հոդվածի թեման է 1859 թ. սուլթան Աբդուլ Մեջիդի դեմ կազմակերպված դավադրությունը, որն ավելի շատ հայտնի է «Քուլելիի իրադարձությունը» անվանումով: Հոդվածագիրն այս հարցի ավելի բազմակողմանի լուսաբանման համար օգտագործել է նաև հայկական մամուլի հաղորդագրությունները: Ներկայացնելով եղած և ընդհուպ մինչև մեր օրերը շարունակվող «Քուլելիի իրադարձության» բնույթի վերաբերյալ բանավեճերը, որոնցում գերակա է այն կարծիքը, թե իբր այդ դավադրությունն ունեցել է «հակամիապետական» ուղղվածություն, Ռ. Սաֆրաստյանը միաժամանակ մատնացույց է անում ժամանակի հայկական մամուլի նյութերը, որոնք վկայում են, որ դավադրությանը նախորդող ժամանակահատվածում Օսմանյան կայսրության թուրք ազգաբնակչության շրջանում նկատվել է հակաքրիստոնեական տրամադրությունների լուրջ աճ: Համադրելով այս բոլոր փաստերը՝ տաղանդավոր գիտնականը հանգում է այն եզրակացության, որ հիշյալ դավադրությունն իր էությամբ հակաքրիստոնյա և հակաարևմտյան էր: Հոդվածում փաստերի անաչառ, պրոֆեսիոնալ, համակողմանի և խոր վերլուծությամբ, գիտնականը ի ցույց է հանում այն անհանդուրժողական մթնոլորտը, որ եղել և արմատավորվել է Օսմանյան կայսրությունում ոչ մուսուլման ազգերի նկատմամբ, ինչը շարունակվել և շարունակվում է նաև հանրապետական Թուրքիայում:

Ուշագրավ է նաև պատմական գիտությունների դոկտոր Ա. Կիրակոսյանի հոդվածը՝ նվիրված ամերիկյան Կարմիր խաչի 1896 թ. առաքելությանը:

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Սաֆարյանի «Զիա Գյոքալփը՝ թուրք կանանց իրավունքների մասին» հոդվածը գալիս է լրացնելու նույն հեղինակի՝ 2001-2007 թթ. ընթացքում հրատարակած «գյոքալփյան» հոդվա-

ծաշարը (հայերեն և անգլերեն), որտեղ նա անդրադառնում է «թյուրքականության» գաղափարախոս, գրող, հրապարակախոս, սոցիոլոգ Զիա Գյոքալփի՝ կրթության և դաստիարակության, տընտեսության զարգացման հիմնահարցերի մասին տեսակետներին, ինչպես նաև «օսմանյան մոդելի» գյոքալփյան քննադատությանը:

Իսկապես բարձրարժեք և շատ հետաքրքիր է Ա. Հովհաննիսյանի «Ցեղասպանության ժխտումը և էթիկան» հոդվածը: Բազմաթիվ փաստերի համադրմամբ ներկայացված խորքային եզրակացությունները բացահայտում են թուրքական պետության իրական էությունը: Հոդվածագիրը Հայոց ցեղասպանության ուրացումը դիտարկում է նաև բարոյականության տեսանկյունից ու թուրքական կողմի կամ թուրքամետ վարձու «գիտնականների»՝ Հայոց ցեղասպանության «գիտական» ժխտումը իրավամբ համարում վտանգավոր, իսկ այդ ժխտողներին՝ «ճշմարտությունը սպանող» հանցակիցներ: Չափազանց արդիական ինչեղություն ունեցող այս հոդվածը համակողմանի և գիտականորեն հիմնավորված սպառիչ պատասխան է թուրքական կողմի հակագիտական տեսակետներին և շահարկումներին:

Ժողովածուի մյուս արժեքավոր աշխատանքներից կցանկանայինք առանձնացնել նաև բանասիրական գիտությունների թեկնածու Լ. Սահակյանի՝ Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքական հետևանքներին նվիրված հոդվածը, որտեղ արծարծված խընդիրները ներկայումս էլ շատ արդիական են, և թուրքագետի եզրահանգումներն ու գնահատականները, կարծում ենք, լուրջ նպաստ են բերում հատկապես հայերիս համար հույժ կարևոր այս հարցի համակողմանի ուսումնասիրման և խորապես ընկալման գործին:

Հետաքրքիր է նաև պատմական գիտությունների դոկտոր Ա. Ավագյանի հոդվածը, որտեղ նա ներկայացնում է Հայոց ցեղասպանության նախապատրաստական փուլի վերաբերյալ որոշ կարևոր տվյալներ, մասնավորապես Բեհաէդդին Շաքիրի այցը արևելյան վիլայեթներ:

Պատասխանատվությամբ է գործին մոտեցել խոստումնալից երիտասարդ թուրքագետ Ա. Դումանյանը, որն անդրադարձել է «Ազգայնական շարժում կուսակցության» («Գորշ գայլերի») 1960-1970-ական թվականների գործունեությանը Թուրքիայում: Համակողմանի և խորը վերլուծելով խնդիրը՝ հոդվածագիրը հանգում է հետաքրքիր և արժեքավոր եզրակացությունների. մասնավորապես ի ցուց է հանել «գորշ գայլերի»՝ իշխանությունը զավթելու և դրանով իրենց պանթուրքական քաղաքականությունը տարածելու ակնհայտ նկրտումները: Թուրքիայում ազգայնական ուժերի գործունեության լուրջ ուսումնասիրությունը կարևոր և հրատապ է մեզ համար նաև ներկայումս. վերջին իրադարձությունները, կապված Ստամբուլում հրատարակվող «Ակոս» շաբաթաթերթի խմբագիր Հրանտ Դինքի սպանության և դրանից հետո ծավալվող իրադարձությունների հետ, դրա պերճախոս ապացույցներն են:

Հեղինակավոր ժողովածուում անվանի գիտնականների կողքին տպագրվելու պատասխանատվության զգացումը, ցավոք, չենք տեսնում Ա. Ավետիսյանի «Օրհան Փամուքը և իր Սև գիրք»-ը»՝ առավելապես ոչ գիտական լեզվով գրված հոդվածում, որտեղ կարելի է հանդիպել իրականությանը չհամապատասխանող տվյալների, թուրքերենից կատարված թարգմանություններում սխալների, ոչ կարևոր, երկրորդական փաստերին տեղ տալու բազմաթիվ օրինակների: Չանդրադառնալով հոդվածում առկա բազմաթիվ այլ բացթողումներին՝ հուսանք, որ Ա. Ավետիսյանը հետագա աշխատանքներում խնդիրներին կմոտենա առավել պատասխանատվությամբ:

Ամփոփելով ասենք, որ «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» մատենաշարի 4-րդ հատորը նշանակալից ձեռքբերում է հայ թուրքագիտության ասպարեզում: Հիշյալ մատենաշարը և մասնավորապես գրախոսվող ժողովածուն գալիս են ապացուցելու, որ հայաստանյան օսմանագիտությունը և թուրքագիտությունը շարունակում են մեծանուն արևելագետներ Արամ Սաֆրաստյանի ու Հակոբ Փափազյանի՝ վաղուց ձևավորած գիտական հարուստ ավանդույթները:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Ռ. Հ.
Բանասիրական գիտությունների թեկնածու